



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 18

ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ Թ. 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ավագանու թ. 4 հերթական նիստի օրակարգը

1. Քանաքեռավան համայնքի ավագանու 2016թ. օգոստոսի 31-ի թ. 55 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
2. Քանաքեռավան համայնքի 2017թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
3. Քանաքեռավան համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ի գիտություն ընդունելու մասին
4. Պարտավորություններ ստանձնելու մասին
5. Քանաքեռավան համայնքի ավագանու 2017թ. նոյեմբերի 21-ի թ. 51-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
6. Սուբվենցիայի հայտ ներկայացնելու համար համաձայնություն տալու մասին
7. Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը և սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին
8. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը նվիրելու մասին

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ
2. ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻԿ
4. ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ
6. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԷՄԻՆ
7. ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 19

ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի ԹԻՎ 55 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է

Քանաքեռավան համայնքի ավագանու 2016թ. օգոստոսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավանի մանկապարտեզ համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին>> թիվ 55 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ

2. ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

3. ԳԱԼՍՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

4. ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ

6. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԷՄԻՆ

7. ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 20-Ն

ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 83-րդ հոդվածի 2-րդ կետի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջների՝

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Քանաքեռավան համայնքի 2017թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ

2. ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

3. ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

4. ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ

6. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԷՄԻՆ

7. ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanakeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 21

ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներով

համայնքի ավագանին որոշում է՝

Ի գիտություն ընդունել Քանաքեռավան համայնքի զարգացման ծրագրի իրականացման
վերաբերյալ տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ

2. ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

3. ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

4. ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ

6. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԷՄԻՆ

7. ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 22

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի և, մասնավորապես, Քանաքեռավան համայնքի տարածքում աղբահանության հեղափոխական աշխատանքների բարելավմանն ուղղված Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի միջև 2016 թվականի ապրիլի 5-ին կնքված վարկային համաձայնագրից (հեղափոխական տեքստով՝ «Վարկային համաձայնագիր») բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքների իրականացման ու պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով՝

համայնքի ավագանին որոշում է

Պարտավորություն ստանձնել 2020 թվականից մինչև 2030 թվականն ընկած ժամանակատվածում հավասարաչափ մասնաբաժիններով Վարկային համաձայնագրից բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորությունների կատարմանն ուղղված՝ ենթավարկի հիմնական գումարները, հաշվարկված տոկոսագումարները, հանձնավճարները, վերաձևակերպման վճարումները, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից 2018-2019 թվականների ընթացքում Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին վճարված գումարների վճարման առումով:

Կողմ -7

1. ԱՐՄԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ

2. ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

3. ԳԱԼՍՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

4. ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ

6. ՍՈՂՈՍՈՆՅԱՆ ԷՄԻՆ

7. ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 23-Ն

ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 51-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջների՝

Համայնքի ավագանին որոշում է.

Քանաքեռավան համայնքի ավագանու 2017թ. նոյեմբերի 21-ի <<Քանաքեռավան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին>> թիվ 51-Ն որոշման N 1 հավելվածի 6-րդ բաժնի ե) ենթակետի 2-րդ պարբերությունը, <<հաստատված նախագծերի>> բառերից հետո, լրացնել <<նոր շենքի տանիքի հարդարման երանգավորման նախապատվությունը տալ RGB 159-51-33 RAL 3016, RGB 54-76-80 RAL 7011 և RGB 120-136-125 RAL 7003 գունային երանգներին>> բովանդակությամբ:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ

2. ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

3. ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

4. ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ


6. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԷՄԻՆ

7. ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 24

ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. վականի նոյեմբերի 16-ին N1708-Ն որոշման, ինչպես նաև 2017 թվականի հուլիսի 27-ի N 910 -Ն որոշման, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջներով, կարևորելով Քանաքեռավան համայնքում գիշերային լուսավորության, ներհամայնքային ճանապարհների վերանորոգման, մշակույթի տան հիմնանորոգման անհրաժեշտությունը, առաջնորդվելով համայնքի զարգացման ծրագրով, նկատի ունենալով համայնքի բյուջեի սուղ հնարավորությունները

համայնքի ավագանին որոշում է

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով սուբվենցիաների ստացման նպատակով ներկայացված ծրագրերին :
2. 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտերը սահմանված ժամկետում ներկայացնել համապատասխան լիազոր մարմին:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ
2. ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
3. ԳԱԼՍՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ
4. ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ
6. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԷՄԻՆ
7. ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 25-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԵՎ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, <Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի, 13-րդ հոդվածի, 19-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի՝

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի

1, աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն հավելված 1-ի

2, աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը՝ համաձայն հավելված 2-ի

3, սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելված 3-ի:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ
2. ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
3. ԳԱԼՍՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ
4. ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ
6. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԷՄԻՆ
7. ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Քանաքեռավան, (0224) 60029 093-70-30-71 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 26

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հաշի առնելով այն հանգամանքը, որ նշված բնակարանը 1960-ական թվականից ի վեր պատկանում է Ստեփան Սարգսյանի ընտանիքին, սակայն առաջին պետական գրանցման գործընթացի ժամանակ նրանց բնակարանի սեփականաշնորհման գործընթացը մնացել է անավարտ՝

համայնքի ավագանին որոշում է՝

1, Քանաքեռավան համայնքի 12-րդ փողոց 4 շենք բնակարան 4 հասցեում գտնվող 55,56 քմ մակերեսով բնակարանը որպես սեփականություն նվիրատվության կարգով անհատույց հանձնել Ստեփան Սարգսյանի ընտանիքին:

2, Կնքել նվիրատվության պայմանագիր:

3, Պայմանագրի վավերացման և գրանցման ծախսերը դնել Ստեփան Սարգսյանի վրա:

Կողմ -7

1. ԱՐՍԵՆՅԱՆ ԻՐԻՆԱ

2. ԲԱԲԱՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

3. ԳԱԼՍՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

4. ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՂԱՍԻ

6. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԷՄԻՆ

7. ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՏՈՒԲ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ



Հավելված
Քանաքեռական համայնքի ավագանու
2018թ. փետրվարի 28-ի թիվ 19 որոշման



I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռական համայնքի մանկապարտեզը՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ հաստատություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հաստատություն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում եւ իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված՝ իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ եւ պարտականություններ:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ սույն կանոնադրությամբ:

3. Հաստատության գտնվելու վայրն՝ ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռական համայնք:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք եւ իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային եւ անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով եւ իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձեւաթղթեր, խորհրդանիշ եւ այլ անհատականացման միջոցներ:

6. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ եւ բանկային հաշիվ:

7. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

8. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների եւ կազմակերպությունների հետ:

9. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական եւ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Հաստատության գործունեության առարկան եւ նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:

11. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության եւ պետության:

12. Հաստատությունը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է

հաստատությունում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելը եւ դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության եւ բնապահպանության, պատմության եւ ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո եւ նվիրվածության զգացման ձեւավորումը, աշխատանքային տարրական կարողությունների ու հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

13. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային եւ համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության ու կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

14. Հաստատությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական եւ սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների եւ ձեւերի ընտրության, ինչպես նաեւ նրանց կյանքի անվտանգության ու առողջության պահպանման համար:

15. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ:

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

16. Հաստատության երեխաների համակազմի համալրման կարգն ու խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:

17. Հաստատությունն ընդունվում են մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:

18. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Հաստատությունը կարող է մշակել եւ

նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

19. Հաստատություններն իրենց գործունեության ուղղություններին համապատասխան բաժանվում են հետևյալ տեսակների՝

ա) մանկապարտեզ, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր եւ ապահովում է երեխաների խնամքը.

բ) հատուկ մանկապարտեզ՝ երեխաների ֆիզիկական եւ հոգեկան զարգացման շեղումների շտկման ծրագրերի գերակայությամբ.

գ) առողջարանային մանկապարտեզ՝ սանիտարահիգիենիկ, կանխարգելիչ եւ առողջապահական ծրագրերի գերակայությամբ.

դ) մանկական կենտրոն, որն իրականացնում է միայն նախադպրոցական կրթական ծրագրեր եւ խորհրդատվական ծառայություններ.

ե) համալիր մանկապարտեզ, որի կազմում կարող են ընդգրկվել նախադպրոցական հաստատությունների մի քանի տեսակներ կամ խմբեր.

զ) կրթահամալիր, որի կազմում կարող են ընդգրկվել նախադպրոցական եւ այլ մակարդակի կրթական ծրագրեր իրականացնող մի քանի հաստատություններ.

է) մանկատուն, որն իրականացնում է ծնողազուրկ, ծնողական խնամքից զուրկ, սոցիալապես անապահով, անբարենպաստ ընտանիքների մինչեւ 6,5 տարեկան երեխաների խնամքը, դաստիարակությունը եւ ուսուցումը:

20. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տեւողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման եւ սննդի կազմակերպման կարգը որոշվում են նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան: Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան եւ տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

21. Հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստատության հաստիքային բժշկական աշխատողների միջոցով, որոնք հաստատության տնօրինության հետ պատասխանատվություն են կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման եւ սննդի որակի համար:

22. Հաստատության մանկավարժական եւ սպասարկող անձնակազմերը համայնքի բյուջեի հաշվին պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

23. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:

24. Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանն ու այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

25. Հաստատության եւ ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջեւ կնքված պայմանագրով:

26. Երեխայի եւ հաստատության աշխատողների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի

հիմքի վրա:

27. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

28. Հաստատության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքները եւ արտոնությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ եւ աշխատանքային պայմանագրով:

29. Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական եւ մանկավարժական բնույթի աշխատանքներ:

V. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

30. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

31. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

32. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) ավագանու համաձայնությամբ՝ հաստատության հիմնադրումը.

բ) հաստատության գործունեության առարկայի եւ նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող եւ (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ) հաստատության կանոնադրության հաստատումը եւ դրանում փոփոխությունների կատարումը.

ե) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

զ) հաստատության վերակազմակերպումը եւ լուծարումը.

է) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը եւ լուծարման հաշվեկշռի հաստատումը.

ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

33. Համայնքի ղեկավարն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը եւ պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

34. Համայնքի ղեկավարը՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձեւավորումը եւ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները եւ ցուցումները.

դ) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման եւ պահպանության նկատմամբ.

զ) համայնքի ավագանու որոշմամբ՝ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները եւ տարեկան հաշվեկշիռը.

ը) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

35. Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձեւավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ: Համայնքի եւ ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների եւ այլ խորհուրդներ:

36. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ եւ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի

որոշումների, սույն կանոնադրության եւ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

37. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը եւ կնքում է գործարքներ.

բ) սահմանում է հաստատության կառուցվածքը եւ կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

գ) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի եւ ավագանու որոշումներով եւ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

ե) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

զ) աշխատանքի նշանակում եւ աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ եւ նշանակում կարգապահական տույժեր.

է) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

ը) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջեւ.

թ) օրենքով եւ սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ եւ վերահսկում դրանց կատարումը.

ժ) իրականացնում է մանկավարժական կադրերի եւ սպասարկող անձնակազմի ձիշտ ընտրություն եւ անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

ժա) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության տեխնիկայի պահպանումը.

ժգ) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը եւ դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը.

ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չհակասող եւ հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

38. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

39. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

ա) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

բ) ապահովում եւ վերահսկում է տիպային ծրագրի դրույթների ու մեթոդական հանձնարարականների կատարումը.

գ) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի եւ արդյունքի համար.

դ) կազմակերպում է մանկապարտեզի մեթոդկաբինետի աշխատանքը.

- ե) ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը եւ ընդհանրացնում այն.
- զ) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին.

է) կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:

40. Դաստիարակը՝

ա) պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջության ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երեւակայությունը.

բ) պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման եւ դաստիարակության համար.

գ) մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

41. Երաժշտական ղեկավարը՝

ա) տիպային ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ, իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը.

բ) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

42. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

ա) կազմակերպում է մանկապարտեզի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի եւ սարքավորումների ստացումը եւ պահպանությունը.

բ) մասնակցում է ձաշացուցակի եւ սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

գ) հետետում է մանկապարտեզի տեղամասի, շենքի, գույքի եւ սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

դ) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային եւ կատարողական կարգապահության համար:

VI. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

43. Հաստատության սեփականությունը ձեւավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ եւ հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաեւ հաստատության գործունեության ընթացքում՝ ձեռք բերված գույքից:

44. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին եւ (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու եւ օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

45. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

46. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

47. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

48. Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

49. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել 1 տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման եւ տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

50. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

51. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

52. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

բ) բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված եւ հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

53. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի-Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

YII. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

54. Հաստատությունը վերակազմակերպվում եւ լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀՀ ֆինանսների նախարար, 207064, Զանաքեռավան
Հաշվետվություն
Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ
(02/01/17 - 31/12/17թ. ժամանակահատվածի համար)**

Տողի	Հոդվածի համար	Ընդամենը (ս.5+ս.6)	Տարեկան հաստատված պլան		Ընդամենը (ս.8+ս.9)	Տարեկան ճշգրտված պլան		Ընդամենը (ս.11+ս.12)	Փաստացի	այդ թվում	
			վարչական մաս	այդ թվում բյուջային մաս		վարչական բյուջե	բյուջային բյուջե				
NN	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1000	ԸՆԴՀԱՆՈՒՄ ԵՎ ՍՈՒՐՔԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300) այդ թվում		102 515 500,00	102 515 500,00	0,00	104 015 500,00	104 015 500,00	0,00	111 015 294,00	111 015 294,00	0,00
1100	1.ՀԱՐՎԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160) այդ թվում	7100	15 950 000,00	15 950 000,00	X	15 950 000,00	15 950 000,00	X	18 829 156,00	18 829 156,00	X
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112) այդ թվում	7131	9 350 000,00	9 350 000,00	X	9 350 000,00	9 350 000,00	X	10 105 522,00	10 105 522,00	X
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		2 200 000,00	2 200 000,00	X	2 200 000,00	2 200 000,00	X	2 669 298,00	2 669 298,00	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		7 150 000,00	7 150 000,00	X	7 150 000,00	7 150 000,00	X	7 436 224,00	7 436 224,00	X
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից այդ թվում	7136	6 000 000,00	6 000 000,00	X	6 000 000,00	6 000 000,00	X	8 015 634,00	8 015 634,00	X
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		6 000 000,00	6 000 000,00	X	6 000 000,00	6 000 000,00	X	8 015 634,00	8 015 634,00	X
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ այդ թվում	7145	600 000,00	600 000,00	X	600 000,00	600 000,00	X	708 000,00	708 000,00	X
1131	Տեղական տուրքեր (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137 + տող 1138 + տող 1139 + տող 1140 + տող 1141 + տող 1142 + տող 1143 + տող 1144+տող 1145+ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ իմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար (տող 1133 + տող 1334), որից՝	71452	600 000,00	600 000,00	X	600 000,00	600 000,00	X	708 000,00	708 000,00	X
1132			120 000,00	120 000,00	X	120 000,00	120 000,00	X	165 000,00	165 000,00	X
1133	աա) Հիմնական շինությունների համար		120 000,00	120 000,00	X	120 000,00	120 000,00	X	165 000,00	165 000,00	X

1136	դ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, բաղադրաչիսական այլ օբյեկտների բանդան թույլտվության համար		15 000,00	15 000,00	X	15 000,00	15 000,00		X	2 500,00	2 500,00	X
1137	դ) Համայնքի տարածքում ուղեից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ համայնքի անկողի օբյեկտներում՝ ուղեից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի խառնամանուշի թույլտվության համար		315 000,00	315 000,00	X	315 000,00	315 000,00		X	340 500,00	340 500,00	X
1138	ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար		150 000,00	150 000,00	X	150 000,00	150 000,00		X	200 000,00	200 000,00	X
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՋՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260) այդ թվում՝	7300	77 215 500,00	77 215 500,00	0,00	77 215 500,00	77 215 500,00		0,00	77 215 500,00	77 215 500,00	0,00
1250	2.5 Վթափնիկ ներքին վաշտոնական դրամաշնորհներ՝ առաջված կառավարման այլ մակարդակներից (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258) ողից՝	7331	77 215 500,00	77 215 500,00	X	77 215 500,00	77 215 500,00		X	77 215 500,00	77 215 500,00	X
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դրուսացիաներ		71 347 300,00	71 347 300,00	X	71 347 300,00	71 347 300,00		X	71 347 300,00	71 347 300,00	X
1257	գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (տուբենցիաներ)		5 868 200,00	5 868 200,00	X	5 868 200,00	5 868 200,00		X	5 868 200,00	5 868 200,00	X
1300	3. ԱՅԼ ԵՎԱՄՈՐՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390) այդ թվում՝	7400	9 350 000,00	9 350 000,00	0,00	10 850 000,00	10 850 000,00		0,00	14 970 638,00	14 970 638,00	0,00
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334) այդ թվում՝	7415	2 800 000,00	2 800 000,00	X	2 800 000,00	2 800 000,00		X	3 000 376,00	3 000 376,00	X
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		2 800 000,00	2 800 000,00	X	2 800 000,00	2 800 000,00		X	3 000 376,00	3 000 376,00	X
1350	3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352) այդ թվում՝	7422	6 500 000,00	6 500 000,00	X	8 000 000,00	8 000 000,00		X	11 289 962,00	11 289 962,00	X
1351	Տեղական վճարներ		6 500 000,00	6 500 000,00	X	7 500 000,00	7 500 000,00		X	9 055 100,00	9 055 100,00	X
1352	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ		0,00	0,00	X	500 000,00	500 000,00		X	2 234 862,00	2 234 862,00	X
1390	3.9 Այլ եկամուտներ (տող 1391 + տող 1392 + տող 1393) այդ թվում՝	7452	50 000,00	50 000,00	0,00	50 000,00	50 000,00		0,00	680 300,00	680 300,00	0,00
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ		50 000,00	50 000,00	0,00	50 000,00	50 000,00		0,00	680 300,00	680 300,00	0,00

Հաշվետվություն

Տողի NN	Բյուջետային ծախսերի գործարարական դասակարգման բաժինների, ինքնուրույն և դաժնի անվանումները	Բաժին	Տարեկան հաստատված պլան				Տարեկան նշեղված պլան				Ժամացույց		
			Խոսք	Դաս	Ընդամենը	Տարեկան հաստատված պլան	Խոսք	Ընդամենը	Տարեկան նշեղված պլան				
			4	5	6	7	8	9	10	11	12	13	14
2000	ԸՆԴԱՄԱՆԵԼ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող2600+ տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100) ԼՇ ԻՍԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԴԵՄՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄՈՒՅՈՒՄՆԵՐԻ (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150+տող2160+տող2170+տող2180)	X	X	X	120 095 300,00	102 515 500,00	17 579 800,00	121 595 341,40	104 015 500,00	17 579 841,40	96 249 220,80	94 172 501,00	2 076 719,80
2100	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄՈՒՅՈՒՄՆԵՐԻ (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150+տող2160+տող2170+տող2180)	1	0	0	39 131 800,00	36 322 000,00	2 809 800,00	46 864 841,40	38 181 000,00	8 683 841,40	40 403 977,00	33 167 277,00	7 236 700,00
2110	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկապարհչության հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	1	1	0	34 922 000,00	33 522 000,00	1 400 000,00	41 651 000,00	35 531 000,00	6 120 000,00	36 631 777,00	31 518 077,00	5 113 700,00
2111	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	1	1	1	34 922 000,00	33 522 000,00	1 400 000,00	41 651 000,00	35 531 000,00	6 120 000,00	36 631 777,00	31 518 077,00	5 113 700,00
2160	Ընդհանուր բնույթի համայնքի ծառայություններ (այլ բաժնի չպատկանող)	1	6	0	4 209 800,00	2 800 000,00	1 409 800,00	5 213 841,40	2 650 000,00	2 563 841,40	3 772 200,00	1 649 200,00	2 123 000,00
2161	Ընդհանուր բնույթի համայնքի ծառայություններ (այլ բաժնի չպատկանող)	1	6	1	4 209 800,00	2 800 000,00	1 409 800,00	5 213 841,40	2 650 000,00	2 563 841,40	3 772 200,00	1 649 200,00	2 123 000,00
2200	ՊՇՏԱԿԱՆ ԴԵՄՈՒՅՈՒՄՆԵՐԻ (տող2210+տող2220+տող2230+տող2240+տող2250)	2	0	0	125 000,00	125 000,00	0,00	125 000,00	125 000,00	0,00	0,00	0,00	0,00
